

Անդրկովկասի ժողովուրդների զրականությունը պատմությունից,
Պետհամալսարանի Հրատարակչություն, Երևան, 1960, 235 էջ:

Պատմության, կուլտուրայի զարգացման չափազանց շատ ընդհանրություններ ունեն Անդրկովկասի ժողովուրդները՝ վրացիները, ադրբեջանցիները և հայերը: Դրանք ավելի քան աչքի են չարնում, երբ այդ ժողովուրդների կուլտուրայի և գրականության երևույթները քննվում են կույր-կողմից: Մի բան, որի ուղղությամբ գեոսեքի: գործ է կատարված: Այս իմաստով գովելի նախաձեռնություն է ցուցաբերել Երևանի Պետական համալսարանի հայ գրականության ամբիոնը, Ադրբեջանի Միություն անվան Պետական համալսարանի ադրբեջանական գրականության և Խրիլիսիի Ստալինի անվան Պետական համալսարանի մրաց գրականության ամբիոնների հետ միասին հրատարակելով Անդրկովկասի ժողովուրդների գրականությանը նվիրված հոդվածների ժողովածու:

Ժողովածուն, որ երեք քաժին ունի, ընդգրկում է գրականությունների զարգացման միջնադարյան, նոր և սովետական շրջանները: Գեղարվեստական խոսքի տիտանների ստեղծագործություններ են մեկնարանվում այդ բաժիններում, բացահայտվում գրական էպոսային երևույթներ: Նարեկացի և Ֆիզուլի, ռեալիզմի սկզբնավորումը և զարգացումը XIX դարի գրականության մեջ, սովետական պոեզիայի ժողովածուն վկայում է, թե ղեկավար ինչքան մեծ անելիքներ ունեն Անդրկովկասի գրականագետները ոչ միայն գրականության արժեքները հարևան երեք ժողովուրդներին ծանոթացնելու, այլև գիտական բազմաթիվ ու բազմապիսի հարցեր միասին, համընդհանուր քննարկում մշակելու և լուծելու ուղղությամբ:

Ժողովածուն սկսվում է պրոֆեսոր Ա. Բարամիսի «Վրաց գրականության մեջ ռեալիզմի սկզբունքների վերաբերյալ» հոդվածով: Այստեղ ընդհանրացվում է մեծ Ռուսթավելուց հետո վրաց գրականության անցած ճանապարհը՝ իր նշանավոր ներկայացուցիչներով: Խեյմուրազ Առաչինի, Արշիլ Բազրաաիոնի և Դավիթ Գուրամիսիլու ստեղծագործության մեկնարանու-

թյամբ գրականագետը հանգում է տեսական միայնապիսի եզրակացության, որի բազմակողմանի մշակումը մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել հավասարապես և՛ վրացական, և՛ ադրբեջանական, և՛ հայ գրականության պատմության լուսարանման համար: Վրաց գրականությունը «երևակայությամբ ստեղծված» հերոսից ղեպի XIX դարի դասական ռեալիզմն է ընթանում պատմա-կենցաղային թեմատիկայի, պատմական դեպքերի և անձնավորությունների պատկերման ուղիներով: Ռուսթավելու ստեղծած հերոսներով պսակվում է ժողովրդի գեղարվեստական մտածողության մի ամրոցը՝ ձիգ շրջանը: XVII դարից սկսվում է հնից անբաժանելի, բայց և գեղարվեստական նոր տարրերով ընդունվող գրականության զարգացման մի շրջան, որը հանձին XIX դարի իր մեծ ներկայացուցիչների ընդունված է համարել ռեալիզմի շրջան: Բայց ժողովրդի գեղարվեստական մտածողության մեջ խզում չի կարող լինել, ինչքան էլ դարավոր լինի նրա անցած ճանապարհը: Ընդգծված է ասսիմիլացիաների, պրոցեսի մոմենտը Ա. Բարամիսի հոդվածում, որն ըստ ամենայնի վերաբերում է ներկա դեպքում նաև հայ և ադրբեջանական գրականության պատմությանը, նրա զարգացման ընթացքին միջնադարյան շրջանից ղեպի նորը: Մինչդեռ, օրինակ, ընդունված կարգով հայ գրականության պատմության այս երկու շրջանը մինչև վերջերս էլ ներկայացվում են անջատ-անջատ, առանց այն կամուրջի, այն միասնական գծերի, որոնցով դրանք կապվում են միմյանց հետ անխզելի կերպով և անբաժանելիորեն:

Բարդ ու մեծ ուղի է դա Անդրկովկասի ժողովուրդների գրականության պատմության մեջ, վիթխարի են դրա մեկնարանության դժվարությունները, քանի որ երկու կողմում էլ կանգնած են իսկապես մեծ գրականություններ՝ միջնադարյան և նոր, աշխարհի ընկալելու և վերարտադրելու իրենց էսթետիկական տարրեր սիստեմով և էությունով, բայց և խորապես միասնա-

կան, որքանով դրանք նույն ժողովուրդների դե-
ղարվեստական գիտակցության սինթեզն են
և րա դարավոր կյանքի զարգացման միմյանց
հաջորդող էտապներում:

Երականության պատմության կարևորագույն
հարցերից մեկն է սա միայն, այսպիսիները բազ-
մապիսի են՝ չլուծված գրականության մեջ: Ըն-
կապած չի կարող լինել, իհարկե, որ դրանք
ավելի հեշտությամբ կարելի է լինի լուծել ելնե-
լով ոչ թե մեկ գրականության, այլ տնտեսա-
պես, հասարակական-քաղաքական կյանքով,
կուլտուրայով միմյանց հետ խորապես կապված
երեք ժողովուրդների գրականության պատմու-
թյան փորձից:

Նարեկացի և Ֆիզուլի՝ կողք-կողքի. երկուսն
էլ ներկայացված գիտական այնպիսի հեղինակու-
թյունների մեկնարանությամբ, ինչպիսիք են
Լ. Մ. Մկրտչյանը և պրոֆ. Կ. Արասլին: Իրենց
ստեղծագործական տարերքի, հումանիստական
էության, հակասությունների ամբողջ հյուսված-
քով մեկնարանվող այս բանաստեղծները՝ ներ-
կայացնում են Արևելքի պոեզիան՝ իր ողջ հմայ-
յով և մեծությամբ:

Բուրժուական գրականագիտությունը շուրջ
երկու դար պասսիվ-հայեցողական էության է
վերագրում Արևելքի, այդ թվում և Անդրկովկա-
սյ ժողովուրդների պոեզիային, գրականությա-
նարեկացու ժառանգության՝ տաղերի,
հայտնի «Մատյան ողբերգության» պոեմի խոր
վերլուծությամբ պրոֆ. Մ. Մկրտչյանը հաստա-
տում է, որ դեռևս վաղ միջնադարում, կրոնական
միստիկայի թանձր ոլորտում, հանձարեղ բա-
նաստեղծը կարողացել է պատռել «միստիկայի
շրջանակները». հասնել հումանիզմի մեծ զաղա-
փարների աստիճանին, ողբերգորեն ապրել այդ
զաղափարների և ֆեոդալական հասարակական
կյանքի պայմանների միջև եղած սուր հակա-
սությունը: Մոտավորապես հինգ դար հետո նույն
ողբերգությունն է ապրում նաև մեծ Ֆիզուլին,
ինչպես նշում և հետոնեն ցույց է տալիս պրոֆ.
Բ. Արասլին: Զափազանց զանկալի է, որ հա-
տույթ տարիներին սրանց կողքին՝ այսօրինակ
գիտական բարձր մեկնարանությամբ, ուսում-
նասիրություններ լինեն նաև միջնադարյան կուլ-
տուրայի մյուս մեծ ներկայացուցիչների վերա-
բերյալ, և գիտական փորձի լայն փոխանակու-
մով, միասնաբար խոսք ասվի գրականության
պատմարանների կողմից բազմիցս արժանացած
Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրայի և
գյւղականության քաղաքականության կամ «ա-
յլեկականության» հարցի վերաբերյալ, Անդր-
կովկասի ժողովուրդների պոեզիան ներկայանա
լիք հումանիստական մեծ հասակով և խորու-
թյամբ:

Երական երևույթների համադրումով գեղար-
վեստական պրոցեսների մեկնարանության առաջ
նյութ է տալիս նաև ժողովածուի երկրորդ բա-
ժինը՝ որ ներկայանում է դրամատուրգ Նալբա-
հեկ Վեդիրովին, բանաստեղծ Իլյա Ճավճավա-
նեին և Շիրվանզադեին նվիրված ուսումնասիրու-
թյուններով: Հատկանշական է, օրինաս, որ Վե-
դիրովի ստեղծագործության մեջ բացահայտվող
գծերը, յուրօրինակությունները համընկնում են
հենց այն պրոցեսներին, ինչ նկատվում է հայ
դասական գրականության մեջ դրամատուրգիայի
սկզբնավորման և զարգացման ժամանակաշրջա-
նում: Երկու դեպքում էլ ունի հստակ դրամա-
յին նախորդում և կոմեդիան, մեծապես կենցա-
ղային կոմեդիան՝ կենդանի, աշխույժ գործողու-
թյուններով և բնավորություններով, հին նախա-
պաշարմունքների և սովորությունների դատա-
պարտման պաթոսով: Թերևս կոմեդիական այս
կենդանությունն ու կոնկրետությունն էլ ահա
ապահովում է ունիզմի արագ հաղթանակը
դրամատուրգիայում, որ նկատվում է աղբյուրա-
նական, ինչպես և հայ գրականության պատմու-
թյան մեջ XIX դարի երկրորդ կեսին: Մինչդեռ
արձակում, օրինակ, հայ գրականության մե-
ծեղիվում նվաճվում է աստիճանաբար, միմյանց
հաջորդող գրական խոշոր գեմերի ստեղծագոր-
ծական ճանապարհի արդյունքում—ինչպես այդ
ցույց է տրված ժողովածուում զետեղված Հր.
Թամրազյանի «Շիրվանզադեի և ունիզմի զար-
գացումը հայ գրականության մեջ» արժեքավոր
հեղվածում (դրամատուրգիայում այդ պրոցեսը,
ուրեմ, սխալում և ավարտվում է միանգամից):
Կ. Սունդուկյանի «Գիշերվա սարբեր խեր» և պա-
տկերգությունը ունի հստակ դրամատուր-
գիայի առաջին փորձերից մեկն էր, բայց «
հենց նույն Սունդուկյանն էլ ստեղծել է «Պեպոն»
ու «Խաթաբալան»՝ հայ ունիզմական դրամայի
մեծագույն գործերը: Նույնը նկատվում է նաև
Վեդիրովի ստեղծագործության մեջ՝ կենցաղային
կոմեդիայից մինչև ունիզմական դրամա և ող-
բերգություն: Իհարկե, ունիզմի նվաճումներն
արձակում հիմք են հանդիսացել նաև դրամա-
տուրգիայի զարգացմանը, և, անկասկած, շատ
է տաղանդավոր Սունդուկյանը, բայց, այդուհան-
դերձ, դրամատուրգիայի այդօրինակ ծաղկումը
աչ միայն հասարակական կյանքի այլի գն-
դարվեստական որոշակի օրինաչափությունների,
չափ յուրօրինակ պրոցեսների արդյունք էր,
սրոցեսներ, որոնց մասին ստիպում է մտածել
կասում-զազելի շատ հետաքրքիր հեղվածը
նվիրված Վեդիրովի դրամատուրգիային:

Ռեալիզմի հարցը դասական գրականության
էության հարցն է. այս տեսակետից շափազանց
զնահատելի է, որ դասական գրականության վե-

որ հիշատակված նշանավոր երեք ներկայացուցիչների մասին գետեղված հողվածներն էլ գրված են այդ տեսանկյունից և շոշափում են ավելի լայն խնդիրներ, քան տվյալ գրողի ստեղծագործությունն է։ Վեգիերովի դրամատուրգիան՝ իր նախորդներով և հաջորդներով, Իլյա Դավճավաձեի պոեզիան՝ ժողովրդի ամենակենսական շահերին ծառայելու կրթով ու նպատակասլացությամբ և վերջուպես ռեալիզմի զարգացման ընթացքը հայ արձակույթ մինչև Շիրվանզադե և նրա ստեղծագործության մեջ։ Այսպիսով, եթե ժողովածուի առաջին բաժնում հիմնականը Անդրկովկասի ժողովուրդների միջնադարյան պոեզիայի հումանիստական բովանդակության և քաղաքացիական էության և, ապա երկրորդ բաժնին կարելի է կցել՝ ռեալիզմի այդ ժողովուրդների դասական գրականության մեջ խորագիրը անարկելով միայն, որ նկատի է առնված ազդեցության գրամատուրգիան, վրացական պոեզիան և հայ արձակը։

Միանգամայն նոր խնդիրներ են արծարծվում սովետական գրականությանը նվիրված բաժնում։ Այստեղ երեք ժողովուրդների գրականությունից էլ ընտրված են բանաստեղծներ, և, ըստ որում, ամենախոշորները՝ Ն. Չարենց, Ս. Վուրղուն և Բ. Տարիձե։ Իրենց ազգային գրականության մեջ նրանցից յուրաքանչյուրը նշանավորում է զարգացման մի նոր շրջան՝ գաղափարական բովանդակությամբ, ինչպես և արվեստով։ Շատ են նրանց միջև ընդհանրությունները՝ մոտիվների, թեմատիկայի, բայց և բոլորովին տարբեր են նրանք իրենց բանաստեղծական նկարագրով։ Առաջին երկուսը մեծապես էպիկական ստեղծներ են, երրորդը՝ լիրիկ։ Սակայն գրական ազգային տրագիդիաներով պայմանավորված այլ են Ն. Չարենցի արտահայտչական գույները, էպիկայի, այսպես ասած, երանգները, և այլ Ս. Վուրղունի, այլ է Գ. Տարիձեն, և ոչ միայն նրանով, որ լիրիկ բանաստեղծ է։ Նա տարբեր է նաև, ասենք, լիրիկ Գեղամ Սարյանից։ Այս էլ հենց ելակետ են ունեցել հողվածագրերը՝ գրականա-

գետներ էդ. Ջրաշյանը, Ի. Էֆենդիևը և Շ. Ռադիանին։ Յուրյց տալ, թե սովետական մեծ ընտանիքում որքան բազմազան և բազմապիսի է Անդրկովկասի ժողովուրդների գրականությունը, քաղաքացիական այդ բազմազանության ակունքներ, այն նորն ու ինքնատիպը, որ այդ բանաստեղծներից ամեն մեկը բերում է իր ժողովրդի ազգային և միաժամանակ Սովետական ընդհանուր, միասնական կուլտուրային։ Բազմակողմանի ընդգրկում ունեցող ամբողջական դիմանկարներ են դրանք՝ գրված բանաստեղծների ստեղծագործական ուղու և գեղարվեստական-արտահայտչական երանգների ու գույների իմացությամբ, նրանց ստեղծած արժեքները վեր հանելու և ընթերցողին մատուցելու համարությամբ։

Միաժամանակ, քանի որ խոսքը վերաբերում է սովետական խոշոր բանաստեղծների, հողվածների հեղինակները անդրադառնում են սովետական գրականության էսթետիկայի սկզբունքներին, մասնավորապես սոցիալիստական ռեալիզմի մեթոդի և ազգային գրականությունների ավանդներն օգտագործելու հարցերին, տեսական հետաքրքիր եզրակացությունների հանգում նրանց վաստակի կոնկրետ վերլուծության և արժեքավորման տեսանկյունից։

Ժողովածուի բոլոր բաժինների հեղինակներն էլ հաջողությամբ են լուծել իրենց առջև դրած խնդիրները. իսկապես որ շնորհակալ է նրանց կատարած գործը մեր եղբայրական երեք ժողովուրդների գրական-գիտական կյանքին փոխադարձաբար միմյանց ծանոթացնելու ուղղությամբ։ Միայն պետք է ցանկանալ, որ այս լուրջ նախաձեռնությունը մեկ ժողովածուով չվերջանա, հրապարակ գան նորերը՝ նոր պրքեր, նոր ժողովածուներ՝ նոր պրոբլեմներով, գրականության մյուս խոշոր դեմքերին նվիրված հետազոտություններով, և ավելի ու ավելի առաջադիմի գրաչափագիտությունը՝ ուսումնասիրելու և գնահատելու համար Անդրկովկասի ժողովուրդների դարավոր մեծ գրականությունն ու կուլտուրան։

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հայ ժողովրդական հանելուկներ (ուսումնասիրություն), Հայկական ՍՍԽ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1960, 170 էջ, գինը 52 կ.:

Հանելուկները, ինչպես բանահյուսական մի քանի այլ ժանրեր, մեզանում տակավին չեն ուսումնասիրված, չնայած անցյալում և մեր օրերում բանահավաքներն ու ազգագրագետները մեծ շահով ժողովել են բանավոր գրականության այդ ժանրի նյութերը և հաճախ հրապարակել

րակել բանահյուսական-ազգագրական ժողովածուներում ու հանդեսներում։ Հայկական հանելուկների մասին մինչև օրս հրապարակված կարելի է գտնել միայն մի քանի հողվածներ և հարկանցի հիշատակություններ, որոնք պարզապես բանահավաքների կամ բանասերների բա-